



Ա Պ Ա Պ Ա Տ Տ

ԹԻՒԵ. — ԵՐ ԶԱ. ՁԵ.

1882

ՏԱՐԻ ՁԵ. ՅՈՒՆԻՍ 31.

## ՓՈՐՁՈՒԵՆԸ ԱՆՑԵԱԼԻՑ.

Պատմութիւնից աեզեկանումենք, որ սորանից գրեթէ վեց դար յառաջ, երբ բուն Հայաստանը Արարաց, Թաթարաց եւ զանազան աղքաց իրերահակուակ եւ տիրապետական մըրցմանց եւ արշաւ անաց ասպարեզ գտրձաւ, հարիւր հազարտւոր Հայեր՝ կրօնի, կետնքի, աշխատանաց եւ գոյից տպահավութիւն գտնելոյ յուսով թողին իւրեանց քաղցրիկ Հայրենիքն ու գունդագունդ գաղթեցին աշխարհիս զանազան կողմերը — ի ԱհՀաստան, ի Պարսկաստան, ի Հընդկաստան եւ ի զանազան մասենո Եւրոպայի:

Ասքա գաղթեցին այս, բայց ակամոյ. Հեռացան իւրեանց Հայրենիքից բայց արտասուօք. Հեռացան նորանից մարմնով, բայց իւրեանց սիրտն ու հոգիքը աւանդ ձգելով Հայաստանի դրախտանման վայրերուն, երկնանման Տաճարներուն եւ ԱՀարց նուիրական գերեզմաններուն, յաւիտեան Հայ անուանն ու Ակեղեցւոյն Հաւատարիմ մնալ ուխտելով: Ո՞վ կարող էր երեւակայել թէ՛ այդպիսի մի ջերմեանդն, Ազգին եւ Եկեղեցւոյն անձնուեր ժողովուրդը՝ երեք հարիւր աւելի կամ պակաս տարիներ իւր ուխտին մէջ հաստատ մնալուց յետոյ՝ իսպառ կ'անջատուի՛ յաւիտեան կրամանուի իւր պաշտելի Ազգիցն ու Եկեղեցուց,

բայց այդ գառն իրօղութիւնը տեսներեւ կատարուած եմք ունա-  
նում մեր ի Աեհաստան գաղթեալ տարարախու հայ եղբայր-  
ների կետնքի սրտամութեան մէջ, ինչպէս նաև ուրիշ մի քանի  
կողմերում։

Այն օրից, երբ այս հայ գաղթականները ուր են գնում Աե-  
հաստանի օտար հոգի վերայ, չե անցնում մի քանի տասնեակ  
տարի, եւ ահա այդ՝ հարստահարութեանց երեսից փախտա-  
կան գաղթականները իւրեանց աշխատասէր եւ տոկուն բնաւո-  
րութեամբ մեծամեծ հարստութեանց եւ նշանաւոր կալուածոց  
տէր գառնայով նախանձելի տեղ են բռնում զիրենք հիւրասի-  
րով օտար հասարակութեան մէջ, նոցա բնակավայր քաղաքա-  
մասերն ու արուարձանները շուտով գարգարվումն Հոյկական  
հոյտկապ եկեղեցիներով, զպրացներով տպարաններով և հա-  
րուստ վաճառատներով. ի մի բան ասել՝ գտնումն իւրեանց  
ցանկացած կրօնի ապահովութիւնը ոչ — քրիստոնեայ ազգաց  
երեսից աշխատանաց եւ կետնքի ապահովութեան հետ մէկ տեղ,  
Բայց այժմ անցիր բնիւթեցնալ, ծայրէ ի ծայր ամբողջ Աեհաս-  
տանը, նորանում քանի հայ ընտանիք կդանես 50 հազար հայ  
ժողովրդից մնացած, որ հայ բարբառոյ եւ եկեղեցւոյ գտա-  
նութեան հետքը անգամ պահպանած լինի. Անչ եղան այն 50  
հազար հայ գաղթականները, նոքա կուլ գնացին պապականու-  
թեանը չարաչար եւ ցաւալի միջոցներով. իրաւամբ ցաւալի եմ  
առում, որովհետեւ են եւ այժմ ոմանք, որոնք ունոյն եւ ան-  
հիմն պատճառներից զրդուած կամաւ կուլ են գնում՝ կրօնի  
պատրուակաւ ծպտեալ տիրապետով ուժերից, իսկ ի Աեհաստան  
գաղթեալ Հոյք ակամայ եւ հարկեցուցիչ պարագաներից սոխ-  
պեալ. Բացարեմք ոյն պարտգանները ամենահարեւանցի կեր-  
պով մի քանի համեստ խորհրդածութեամբ հանգերձ։

Եթէ ծառը իւր արծուալին է ծառ, որիցս սնունգ է սանսւան  
հապա մի ազգ եւս իւր սեպհական Հոյքենիքով, մայրենի լեզ-  
ուովն ու ազգալին ինքնուըրոյն եւ անկախ եկեղեցին է ազգ՝  
բռնի բռն նշանակութեամբ. Կարիք ծառը արմաաից, կը կորց-  
նէ նու իսկոյն իւր կենդանութիւնը. բաժանիք մի հասարակու-  
թիւն իւր հայրենիքից մայրենի լեզուից եւ իւր ազգային եկե-  
ղեցուց, կը կորցնէ նու իւր սեպհական ազգութիւնը. սա բազմո-  
տեսակ փաստերով ապացուցեալ ճշմարտութիւն է։ Այսպէս

ևս իւրեանց հայրենիքից եւ նախնեաց նուիրական յիշատակներից արդէն անջառուած մեր ԱԵՀաստանի հայ եղբարք բաժանուելով իւրեանց մայրենի լեզուից եւո՛ եւ ազգային եկեղեցուց՝ «մնաս քարեաւ» տապցին եւ իւրեանց հայ ազգութեանը:

Թող զիս չմեզազրեն ընթերցողք իրբեւ կրօնական ցաւողի անցից անտեղի յեզյեզիչ, այս անցից յիշատակութեամբ ես ամենեւին դիտաւորութիւն չունիմ աննպատակ կերպով մեր հին վէրքերը նորոգել, այլ նոցա մի քանի կետերն իրբեւ կենդանի օրինակ ներկայացնել ընդգէմ ինչ ինչ թիւր կարծեաց, ընթացից եւ ուղղութեանց, որոնք ներկայումն եւս ոկտել են երեւան գալ ի տեղիս տեղիս մեր հայ հասարակութեանց մէջ։ Ա՞նչ է պատմութեան նպատակը, եթէ ոչ ներկայ սերնդոց տռաջի առնել անցելոց չար ու բարի արարքը, չարէն խորշել տալու՝ եւ բարւոյն հետեւել տալու համար։ Ահա այս նպատակաւ է եւ իմ այս տիտուր անցից յիշատակութիւնը։

Արդարեւ մայն ազգին եւ հասարակութեանը, որի գլուխը հոփիւր վարձկան է, որ իւր անձնական շահերը ազգայինէն, հասարակականէն վեր կդասէ, որ առաւել իւր անձնական կըրքերն ու հաճոյքները՝ քան իրեն ժողովրդեան նիւթական եւ բարոյական պէտքերը յագեցնելու կաշխատի։ Ի ԱԵՀաստան գովթեալ Հայոց գլխուն այս կորստարեր աղէտը թափողը եղու այսպիսի մի վարձկան հովիւ, ազգադաւ, խարդախսակիտ եւ ախտամոլ չէ Նիկոլը իւր օտարամիտ համախոհների աջակցութեամբ, որոնք օտարաց շնորհիւ պատուաստուած էին իւր ժողովրդեան միջից։ Առքա իւրեանց փառամոլութեան եւ շահասիրութեան անյագախտերը յագեցնելու եւ միւնոյն ժամանակի իւրեանց հակագազափար մասնաւոր անձանց վրէժինդիր յագթողներ հանդիսացած լինելու համար։ օտարաց — Եզուիտաց ուժովը զրահաւորուած՝ այնչափ հարսաւհարեցին խեղճ ժողովրդեան նիւթապէս եւ բարոյապէս, մինչեւ որ խլեցին նոցա իւրեանց սննդառաւ արմանից, խլեցին իւրեանց ազգ՝ եկեղեցու ծոցից, մնաւնալ տուին իւրեանց մայրենի լեզուն, անջառեցին Հայ՝ ազգութեան քարոյական խարիսխ եւ կեդրան Ա, Կթմիածնից եւ պատռաստեցին խրեանց պապով անսւթեան բնի վերայ։ Այս խորամանգ աղուէսներն ամենայարմար միջոցը յաջողեցան ձեռք բերել կործանելու համար այն ազգը, որը կործանել կամ խօս-

ուիլ ակարանում էին Շապուհներ, Յաղկերտներ, Զարմաղաններ, Աշխարաններ եւ այլ բռնաւորք:

Արդեօք չկան եւ ներկայումս նոյնաեստկ մարդիկ նոյնօրինակ ազգակործան գերեր խաղալիս, թէտէտ այլ եւ այլ միջոցաց պատրաւակաց տակ ծագտեալ՝ ոչինչ պակաս քան չիք նիկոլի ու նորտ համախոհները: Այս, հայ ժողովրդեան արդի կացութիւնը այնպիսի ձախող հանգամանքներով եւ վտանգաւոր պարագաներով է շրջապատած, որոց մէջ թէ ներքուստ եւ թէ արտաքուստ շատ նենգամիաների եւ ազգատեացների է յաջողում պլոտոր ջրում ձուկն օրսալ, գաւել, խարել, միայն թէ՛ մի քայլ յաւաֆ անցնել կարողանան եւ շահել իրանց փառատիրութիւնը: Գիտաւորութիւնը նոյնն է, խելաւարը ըստ գիտաց եւ ըստ յաջաղելց:

Պէտք խօստովանել եւ այս որ՝ որչափ եւ Վեհաստանի հայերի կորստեան պատճառը ուղղակի չիք նիկոլի եւ նորտ նմանների փառաւալութիւնն ու շահտոփրութիւնն եղան, այնու ամենայնիւ ոչ սակաւ ոյժ եւ քաջալերութիւն էին տալիս նոցա արարմանց եւ ընթացից նոյն ժողովրդի այն թիւրամիտ մառը, որ օտար կրժութեան եւ գաստիրաբակութեան ազգեցութեան տակ բոլորվին իւրեանց նախնիներից խորթացած՝ սակաւիկ մի ազգասիրութեամիք հանգերձ՝ իւրեանց բարեկեցութիւնն ու լուսաւորութիւնն անմիտ օտարասիրութեան մէջ էին որոնում, եւ միշտ ընդգէմ էին ժողովրդեան այն պահպանողական մասին, որ ազգային եկեղեցւոյն, նորա առանձնայատկութիւններին, նորա կարգաց ու կանոնացը միշտ ջերմ պաշտպան էին հանգիստնում ամենայն պարագայից մէջ՝ սակաւիկ մի կապաւթեամիք հանգերձ: Այս թիւրամիտ մասը իրենց Հայկական եկեղեցին ոչ—քրիստոնեայ ազգից հովանաւորուած գտնելով՝ նորա գոյութիւնը բոլորվին ազահօգուած էր համարում եւ մի տեսակ անտարբերութեամիք անփոյթ էր մնում նորա կարգաց ու կանոնաց ճիշտ պահպանութեան մասին: Այս թիւրամիտները չէին կարողանում հասկանալ, որ այն՝ իւրեանց ձեռք բերած կարծիքական ազատութեան տակ՝ իւրեանց ազատ ու անկախ եկեղեցւոյն տւելի վտանգներ էին սպասում, քան ոչ—քրիստոնեայ ազգերից սպառնացածները: Սոքա իւրեանց թերի հասկացողութեամիք չէին կարողա-

նում խոիր զնել իւրեանց աղբա, սողութառ և վեհառըն եկեղեցոյ եկեղեցոյ եւ տիրապետել ձգոտող պապական եկեղեցւոյ մէջ, եւ Հետ զհետէ անզգալի կերպով հնթարկվումէին վերջնոյս ճնշող աղքեղութեան տակ՝ այնուեւ որ իրը երեք հարիւր տարւոց յետու իւրեանց եկեղեցւոյ եւ առաջնորդի յարարերութիւնը իտպառ գազարեցրին Ա. Էջմիածնից եւ իւրեանց աղքային հաստատութիւնը բնթարկեցին պապական եկեղեցւոյ վարչութեան ներքոյ պապական եկեղեցւոյ ցանկութիւնն ու նպատակն եւս այս էր, որին համար այդ երեք հարիւր տարւայ ընթացրում մեծամեծ ջանփեր էր անում եւ հազար ու մի որոգայթներ լարում ինը ու թիկունք ունենալով լեհական — քրիստոնեայ իշխանութիւնը եւս Թէպէտ եւ Ժողովրդեան այդ թիւրամիտ մասն եւս վերջապէս զգաց իւր սխալմաւնքը, երբ պապական եկեղեցւոյ ճնշող ոգին ծանրացաւ իւր վերայ բայց այնուհետեւ շատ ուշ էր. աղասութեան ելք չկար՝ բաց ի գաղթականութեան փախուստի դիմելէ:

Տարարազգաբար ներկայում եւս ի տեղիս անդիս մեր աղքայնոց ոմանց անփութութիւնն Աղքային Եկեղեցւոյ կարգաց եւ կանոնաց պահպանութեանց մասին, ինչպէս նույւ եկեղեցականաց ոմանց մերթ տղիտութիւնը, երբեմն անտարբերութիւնը, շահախնդրական ձգտմամբը միայն, ոմանց անհեռանես վարմաւնքն աղքային հաստատութեանց վերաբերմամբ, ոմանց չափազանց ուսարամութիւնն ու արհամարհանքն աղքային աւանդութեանց եւ սովորութեանց ոմանց եւս սառն յարարերութիւնը գէպի Հայ — աղքութեան բարոյական կեզրոն Ա. Էջմիածնիր եւ երբեմն եւս ոմանց խապառ հեռակացութիւնը նորանից այս ամենը միթէ Ա. Էջաստանի Հայոց թիւրամիտ մասին ընթացից եւ ուղղութեան ճիշտ պատկերը չեն ներկայացնում. Աթէ մենք չունիմք այնչափ հեռականութիւնն, կամ թէ մեզ այսպէս է առ այժմ՝ ձեռնառու, որ յենք կամենում կամ կարօգանում մեր այս թիւր վարմանց եւ ընթացից՝ աղասիայում անշաւշտ յառաջանալի վնասութեր հետեւանքը նախառանել եւ զգուշալ, միթէ մեր ապագաց սերնդի սղջամիտ մասը անացաւ գտառասանաւ չէ գտառապարտելու զմեզ մեր այսօրինակ թիւր վարմանց եւ ընթացից համար երբ նացա հետեւանաց գառն մրաքը նա հարկադրուած կլինի քամել ցյասակ:

Ներսւի ասել, որ Հայի պակասութիւններից մին եւս այս է, որ կանխառ չէ ջանք անում նախառեսել իւր թիւր ընթացից, վարժանց եւ ուղղութեան վնասաբեր հետեւանքները եւ նախառեսողներին եւս ջանսալով եւ յամառելով՝ մեծամեծ զոհեր է տալիս եւ ապա ստրօնակալով գալիս է ուղիղ ճանապարհից բայց շատ անդամ տարաժամ եւ ապարդիւն կերպով։

Այս համառօտ խորհրդածութիւնները անելու աեղիք տուեցինք՝ Հնդկաստանի սահմաններում՝ Հոլանդական արքապետութեան ներքեւ եղած ձաւա կղզւոյ մերագնեայց գոտինի հեռատեսութեամբ խմբագրած կանոնագրութիւնը իւրեանց ազգային եւ եկեղեցական գոյութեան եւ հաստատութեանց եւ զումարաց ապահով վարչութեան մասին, որը տեղական քաղաքական իշխանութեան կողմից հաստատելուց ու վահերացնելուց յետոյ՝ Պարսկաստանի եւ Հնդկաստանի Առաջնորդ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսի միջոցաւ մատուցած են Ազգիս Վեհափառ Հայրապետին, եւ զոր ամբողջութեամբ Հրատարակում ենք Աշարքափիս ներկայ ամսատետրի միջոցաւ ի գիտութիւն եւ յօրինակ նոյնառեսակ պարագայից մէջ գտանուող Ազգայնոց մերոց։

Յիշեալ Գեր. Առաջնորդի կազմած վիճակագրական տեղեկութիւններից երեւումէ, որ գեռ 1876 թուին Բիթուիս քաղաքում գտանվաւմէր 75 հոգի հայ բնակիչք 15 տանց մէջ զետեղեալ, յորոց 45ը արական եւ 30ը իգական։ Առւրբայիս քաղաքում եւ նորա շրջակայքում՝ 75 հոգի՝ 12 տանց մէջ զետեղեալ։ Ամարանգ քաղաքում եւ նորա շրջակայքում՝ 27 հոգի 4 տանց մէջ զետեղեալ, յորոց 24ը արական եւ 3ը իգական։ Խոկ ձաւայի այլ եւ այլ կողմերում զանազան առեւտրովք զբաղուած՝ 25 — 30 հոգիք։

Ազգիս Վեհափառ Հայրապետին եւս գովելով ձաւայաբնակ մերագնեայց այս հեռատես ընթացքը եւ օրհնելով նոցա ազգօգուտ ձեռնարկութիւնը՝ բարեհաճեց տալ կարգագրել Սինոդին Ա. Էջմիածնի օրագրութեամբ ի 27 փետրվարի տարւոյս՝ նախ իւր Տնտեսական, Դատաստանական եւ Հաշուարարական մասերում կազմել եւ պահպանել առանձին գործ։ Երկրորդ՝ Տպարանական ժողովին պատուիրել ապագրել նոցա կանոնագրութիւններից 100 օրինակ առանձին առանձին տետրակով եւ բաժա-

նել ամենայն վիճակուորաց, վիճակային Ատենից եւ Հոգեւոր Կառավարութեանց Առաստանի, այլեւ վիճակաւորաց Տաճկաստանի եւ Պարոկաստանի եւ այլաց Հոգեւոր վարչութեանց ի տեղեկութիւն եւ յապահով պահպանութիւն ապագայ Հարկաւորութեան Համար, եւ երրորդ՝ Պարոկաստանի եւ Հնդկաստանի Առաջնորդ Ֆեր. Քրիստոն Եպիսկոպոսին Հրամանագրել պատուիրել ձաւացի Հայազգեաց Վարչական Փողովոյն որ որպես սի եւ իցէ փոփոխութիւն կամ յաւելումն եւ կամ պակառումն եթէ պատահի իւրեանց վարչութեան՝ կանոնադրութեան եւ այլաց մէջ, անմիջապէս գրաւոր տեղեկութիւններ Հազարդէ կամ Ա. Խըմբածնի Ա. Ախուզին կամ Աղքիս Վեհափառ Հայրապետին ի գիտութիւն առ յապահն:

Հառ այստեղ մերազնեաց այս Հեռատես գործողութիւնը արդարեւ ամենայն գովութեան արժանի է, որոնք թէեւ աշ, այնու ամենայնիւ խոչեմաբար ի նկատի առնելով Ահշաստանի եւ այլ եւ այլ տեղեաց Հայերի միտուաբեր եւ կորսական փորձերը, որոց այնչափ ազգային հաստատութիւններից գունուրեք եկեղեցիք միայն են մնացած այժմ, ձևանարկած են այս վեհմ գործը, իւրեանց ապագայ սերնդոց յարատեւ գոյութիւնը ապահովելու համար՝ ապահովելով միանդամայն ազգային եւ եկեղեցական հաստատութիւններն ու գոյըբերն:

ԱԱՀԱԿ Վ.Ա.ՐԴԱՊԵՏ.

## ՍԱՀՄԱՆԵԳՐՈՒԹԻՒՆ

Ե.Ե.

ԱՅՐՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴԻՆԱԿԱՆ ՀԱՅՈՑ Ի ՃԱՒԱԾ

ԱՀԱԿ ԺԱԿՈՎԵՐԵԱՆՆ.

Պայման 1. Ե ի ձաւա ժողովուրդ, որ գաւանի գիրօնո Քրիստոնէութեան ըստ կարգաց Հայաստանեաց Եկեղեցւոյ, եւ կոչի ժողովուրդ Հայոց ի ձաւա

Դառ ԺԱԿՈՎԵՐԵԱՆՆ.

Պամ. 2. Ե դասու ժողովրդեանն են ամենայն Հայ Քրիստոնեացք որք բնականան ի ձաւա, եւ կամիցին գասակցել նմին: